

Հ Ա Ս Ա Կ Ք Մ Ա Ր Դ Կ Ո Ւ Թ Ե Ա Ն



Մ Ա Ն Ո Ւ Կ

Ձերդ թեւարոյս հաւ ի բընկան դեռածին ,
Նորածընունդ մանկիկ ի ծոց ծընողին ,
Խինդ ընտանեաց , քընքոյշ գըրգուանք խայտալից ,
Բաժակ փափուկ սիրայորդոր համբուրից .

Մերթ հայրենի եւ մերթ ընդ մօր ծոց արձակ ,
Խաղայ մանուկ եւ առ նոցին սիրտ ջերմեակ
Հանգուցանէ զկակուղ սըրտիկ դողդոջուն ,
Ակընկալեաց , յուսոյ զանօթըն զեղուն .

Ջորով դեռ քօղ անկեալ պատէ սեւաթուխ ,
Եւ մերկասցի տակաւ աչաց լուսաբուխ
Արփիափայլ շողալ յարեւ կենսաւէտ :

Խաղաղասիւզ առաւօտու տան աւէտ
Բիրք պաղպաջուն ջինջ այգաստեղն ի տիպար ,
Եւ ընտանեաց շողք ցոլան յայտս հեշտարար :

Պ Ա Տ Ա Ն Ե Ա Կ

Առ մարդկեղէն թաւուտ տընկով բարգաւաճ՝
Շառաւեղ նոր , տերեւք դալար , ծիւք փափկիկք ,
Վերընձիւղեն առ սուրբ հոսանս ի կարկաչ ,
Ի ջեր ախորժ գարուն արփուոյն զովասիւք .

Բըղխեն տակաւ փըթիթք ծաղկանց երկնաձիր ,
Երանքք պէս պէս , գեղ սիրային վառ ի վառ :
Եւ ծաւալեն նըւիրական բոյր ի սփիւռ
Անոյշ քան զգիրգ խունկս հըրածախ ընդ բուրվառ :

Սաղարթք կակուղ հովանաւոր կան նոցին
Մինչ դեռ այգուն է սիւզ թեթև հովաշունչ ,
Եւ ոչ արփւոյն տեղան նըշոյք ասթագին :

Հեշտ է հըսկել . այլ խորշակին մինչ մըռունչ
Հընչէ ընդ հուպ եւ բարկ արեւ յորդէ հուր ,
Գըթասցիս Տէր , զի մի անկցի դա խամուր :

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Այն ինչ կենաց յասպարիզին թեւակոխ
Թաւալ բըբաց ի սուր հորովս երկրաչափ ,
Տիեզերաց կըշուեալ անդէն խուն ըզհող
Եւ պարմայէ քերել , գըլել զերկնիւք թափ :

Պէս երիվար աներասան , օղաթուիչ
Յարին յաշխոյթ , սըրտին յեռանդն ասպաստան .
Յունայնավար հարեալ ի տենչ յոյս պատրիչ
Հանդէպ զհետովք մըրկէ փոշի յարշաւան :

Համառօտեալ ընթաց հակիրճ յասպարէզ
Զերասանակն ուժգին պընդէ յանկարծոյն
Եւ ահաբեկ առ վախ եւ վիհ կասի յետս :

Պաշարեն զինք մահու յերկունս ահ եւ հոյն .
Այլ յապաշաւ ըզգօն մըտացն անդանօր
Դիւրէ նըմա զուղին երկնից աջն հըզօր :

Ա Յ Ր

Ըզկէս կենօք եկեալ ժաման մահացուն ,
Արդ ի խոնարհ յառաջեն քայլք մէտ ի մէտ
Ծանր ի վերելս , այլ յէջս երագ եւ սահուն .
Ծերոյթ թախիժ ճանասպարհին կարապետ :

Ընդ ծիրս երկնից կենացն արեւ ի զընաց
Կէս գըլէ լուրթ եւ կէս պայծառ ըզբարձամբ .
Ոչ եւս այգուն զըւարթ նըշոյք առցեն դարձ ,
Ոչ եւս ծաղկունս բերցէ երկիր առ ոտամբ :

Գան արջնաթոյր ըստուերք ընդ դաշտ ի լերանց
Բառնին զըւարճք , նուազին ժըմիտք և բնութեան .
Հապ իսկ հողմոյն ի ծառատունկ թափանցանց

Կոծեալ՝ հոսէ զտերեւս ոստոց ցիր եւ ցան .
Եւ կենսաւէտ վըտակն ի վէժ առ նովաւ՝
Քաղեալ յալեաց եւ ցամաքի արդ տակաւ :

Ծ Ե Ր

Որպէս պանդուխտ յայգուէ կալեալ ճանապարհ ,
Էանց ընդ դաշտ , լերանց ընդ կող զառ ի վեր
Եւ ընդ վայրէջ գամ քան ըզգամ ի խոնարհ .
Եկն արդ լերին զով յըստորոտ հովաբեր :

Ուր ըսպառի եւ ճանապարհ ընթացից
Ոչ եւս դաշտաց պարզին ծաւալք յանդիման .
Գայթ ի գայթի եւ գողդոջուն քայլք ոտից
Ծախեալ ըսպառ հուր բոց սրբտին եռանդան :

Ոնցին զնովաւ վառ վառ ծաղկունք գարնայնոյ ,
Թառամեցան վարդից բոլորք կարմրորակ .
Ոհա պատէ զիւրեւ ճեպեալ մութ միգոյ :

Ճակատըն պարծ պայծառազարդ ի պըսակ
Արդ խըրթնատես եւ լրթագոյն , ամայի
Ժամ ըստ ժամէ ի հող ցըրտին խոնարհի :

Հ . Ա . Ե .

